


ՏՈԿՈՍԻ ՄԱՍԻՆ

Անօրէն եւ չար մոլութեան տէր մարդը, փոխանակ տոկոսներէն երկիւղածութեամբ հեռանալու, մեծ ցանկութեամբ կը մտերմանայ տոկոսներու շահին հետ, որը կը ցրուէ իր ուշադրութիւնը՝ որպէսզի արհամարհէ Աստուծոյ պատուիրանը, կը շփոթեցնէ սիրտը՝ որպէսզի ահեղ դատաստանի օրը չյիշէ: Միտքը այնպէս մը կը քարացնէ, որ չգթայ իր եղբորը հեծեծանքին վրայ, կը փակէ ականջներն ու աչքերը ու գիմք դիտողներու արհամարհանքէն չ'աւչնար, այլ՝ թըշուառ հոգիին համար համարձակ կերպով յաւիտենական հուր կը հաւաքէ եւ կը դիզէ: Եւ ինչպէս, որ երկրագործները կ'աղօթեն եւ կ'աղերսեն Աստուծոյ, որպէսզի անձրեւ տեղայ ցանուած սերմերուն վրայ, նոյնպէս այ վաշխառուն, աղփատութիւն, նեղութիւն եւ սով կը ցանկայ բոլորին, որպէսզի տրուած դրամի տոկոսին փոխարէն, մարդոց ստացւածքներուն տիրանայ: Դրամը փոխտուած ժամանակ գուարթերես է, իսկ երբ տոկոսի պայմանաժամը հասնի եւ նկատէ պարտապանին աղփատութիւնն ու շփոթանքը, անգութ կը դառնայ, աղաչողին երդումին չի հաւատար ու նեղութեան մէջ գտնուողին աղերսանքին երբեք զիջում չի կատարեր, այլ՝ կը դառնայ անողոք ու անզիջող եւ պարտապանը կը նկատէ, որպէս իր ծառան: Կը քննէ, գիտնալու համար, թէ [պարտապանը] ինչ ինչքեր ունի, որոնք կրնան իրը ըլլալ: Կը հետազօտէ, թէ ուր տարած եւ պահած է գանձնա՛: Բազմութեան մէջ կը նախատէ, սիրելիներուն մօտ կ'աւչցնէ եւ հանրութեան մէջ կը չարչարէ:

(Ճանոր Յովհան Մանգակունի)

ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՊԼՂԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՍՏԱՏՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն


Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Քրիստոսի ներկայութիւնը ինքնին ծնունդ կու տայ խաղաղութեան: Հոն, ուր Քրիստոս ներկայ է, հոն Աստուծոյ սէրն ու խաղաղութիւնն է, որ կը ծաղկի:

Քրիստոսի յայտնութիւնը կու գայ վկայելու, թէ խաղաղութիւնն ու եղբայրասիրութիւնը կամար նետած են հաւատացեալներու հոգիներուն վրայ:

Եւ դպիրները սրտագեղ երգով կու գան արձագանգել աստուածային սիրոյ զգացումի փթթումին եւ տարածման: Թշնամանքը տակաւ կը հեռանայ սրտերէն եւ աստուածային սիրոյ կամարումին ներքեւ, հաւատացեալներ խաղաղութիւնն ու եղբայրասիրութիւնը կ'ողջունեն: Եկեղեցին՝ հաւատացեալներուն համախմբումը, աստուածային սիրոյ մէջ կը միաձուլուի, որովհետեւ Քրիստոս է, որ կը յայտնուի իր աստուածային փառքով ...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍԲԻ ԽՄ ՂՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 30 ՅՈՒՆԻՍ 2024 ԹԻՒ 26

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Իմաստ 7.25-8.4: Զք. 14.16-21: Ա. Յի. 1.1-7: Ստ. 16.13-17.13

ՎԱՐԴԱՎԱՐ ՏՕՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ԸՐԻՍՏՈՍԻ ՅԻՍՈՒՍ ԸՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹՔՈՍԻ 16. 13-17. 13

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ: Որովհետեւ ով, որ ուզէ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն եւ ով, որ ինձի համար կորսնցնէ իր անձը՝ պիտի գտնէ զայն: Ի՞նչ օգուտ, երբ մէկը ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ որեւէ բանով չի կրնար իր կեանքը ետ առնել: Արդարեւ, երբ մարդու Որդին գայ իր Հօր փառքով իր հրեշտակներուն հետ, իւրաքանչիւրին իր գործերուն համաձայն հատուցում պիտի կատարէ: Վստահ եղէ՛ք, որ հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ իր թագաւորութեամբ»:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց: Իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան: Եւ ահա երեցաւ Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ:

Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, ի՛նչ լաւ է հոս. եթէ կ'ուզես երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար»: Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք: Ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր. «Այս է իմ սիրելի Որդիս, որ հաւնեցայ: Անոր մտիկ ըրէ՛ք»: Երբ աշակերտները լսեցին ասիկա, սարսափահար երեսի վրայ գետին ինկան: Յիսուս մօտենալով դպաւ անոնց եւ ըսաւ. «Ոտքի ելէ՛ք, մի՛ վախնաք»: Աշակերտները իրենց աչքերը վեր բարձրացուցին եւ Յիսուսէ գատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց ըսելով. «Մինչեւ որ մարդու Որդին մեռելներէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը, ռեւէ մէկուն մի՛ պատմէք»: Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի. «Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն, թէ նախ Եղիան պէտք է գայ»:

Յիսուս պատասխանեց. «Ճիշդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամէն ինչ: Բայց գիտցէ՛ք, որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ անոր հետ վարուեցան ինչպէս, որ ուզեցին: Նոյնպէս այլ մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ»: Այն ատեն, աշակերտները հասկցան, թէ Յովհաննէս Սկրտիչի մասին կը խօսէր ան:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՏՕՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ՝ ՎԱՐԳԱՎԱՌ

Վարդավառը ժողովրդական այն անունն է, որ կը տրուի Հայաստանեայց եկեղեցւոյ հինգ գլխաւոր տօներէն «Այլակերպութիւն» կոչուող տաղաւարին: Այս նոյն տօնին կը վերագրուի, նաեւ երրորդ կոչում մը, որն է «Պայծառակերպութիւն»:

Պայծառակերպութեան տօնը, ամէն տնօրինական տօներու նման, կը վերաբերի Յիսուսի կեանքէն յատուկ դրուագի մը: Անոր փառաւոր ու լուսաւոր կերպով երեւնալուն իր առաքելներէն երեքին՝ Պետրոսի, Յովհաննէսի եւ Յակոբոսի, Գալիլիոյ սուրբ լերան վրայ: Ահա, թէ ինչ ձեւով կը ներկայացուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան դրուագը Մատթէոսի աւետարանին մէջ.

«Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանց, ուր առանձին էին: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց: Իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ներմակ եղան:

Եւ ահա երեւցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի.

– Տէ՛ր, ի՛նչ լաւ է հոս: Եթէ կ'ուզես, երեք վրաններ շինեմք, մէկը քեզի, մէկը Մովսէսին եւ միւսը Եղիային համար:

Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք: Ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր. Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հանեցայ, անոր մտիկ ըրէ՛ք» (Մտ 17.1-6):

Վարդավառի կամ Այլակերպութեան տօնին վերաբերող ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող աւանդութիւնն է ջրախաղեր կատարելու աւանդութիւնը:

Կ'ըսուի, թէ Վարդավառի տօնակատարութեան ընթացքին մանուկներ, ծերեր, այրեր ու կիներ տուներու մէջ, փողոցները, դաշտերը, գետերու ափին, աղբիւրներուն եւ առուներուն մօտ կուժերով իրարու վրայ ջուր կը թափեն եւ զիրար ջուրերուն մէջ կը մխրեն: Այս աւանդութիւնը Նոյի ժամանակներէն մնացած է Հայաստան աշխարհի մէջ: *Աւանդապատում*

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ինչո՞ւ եկեղեցւոյ մէջ մոմ կը վառենք:

Մոմ վառելը շատ հին սովորութիւն է: Անշուշտ, հին ժամանակներուն, մոմի գործածութիւնը անհրաժեշտ էր լուսաւորութեան համար, մանաւանդ երբ արարողութիւնները տեղի կ'ունենային գիշերները: Ժամանակի ընթացքին երբ մոմի լոյսը փոխարինուեցաւ նրագներով եւ ապա էլեկտրականութեամբ, մոմի գործածութիւնը մնաց:

Սուրբերու նկարներուն առջեւ մոմ վառելը գոհ մատուցանելու իմաստ ունի: Ժամանակին հին կտակարանին մէջ, մարդիկ իրենց մեղքերը քանդելու համար Աստուծոյ կենդանական գոհ կը մատուցանէին, գոհին արիւնը հեղելով: Քրիստոնէական շրջանին հաւատացեալներ գոհ մատուցանել դադրեցան, որովհետեւ Քրիստոս ինք եղաւ միակ եւ գլխաւոր Զոհը, որ խաչին վրայ գոհուեցաւ եւ իր արիւնը հեղեց մարդոց մեղքերուն համար եւ Ս. Պատարագը յիշատակումն է խաչին վրայ Քրիստոսի գոհագործուելու:

Ներկայիս, մոմը կը խորհրդանշէ անարիւն եւ բանաւոր գոհ, փոխան հին կտակարանի կենդանական արեան հեղմամբ գոհերուն:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԲԵՐԱՃ ՈՐՎԱՍՈՒԹԻՒՆԸ ՈՐՆԻՔ

«Գինի չունին» (Յհ. 2.3): Հին Կտակարանին մէջ գինին ուրախութեան խորհրդանիշ իբրեւ կը ներկայանայ: Խօսքը պատահական ուրախութեան մը մասին չէ, այլ՝ այնպիսի ուրախութեան մը՝ որ ծնունդ կ'առնէ Աստուծոյ ներկայութենէն: Երբ Մարիամ կ'ըսէ. «Գինի չունին», կարծէք ամբողջ Իսրայէլի ժողովուրդին մասին է որ հաստատում մը կ'ընէ: «Գինի չունին» ըսելով, կարծէք ըսել կ'ուզէ՝ «Իսրայէլի ժողովուրդը գինի չունի», այլ խօսքով՝ ուրախութիւն եւ երջանկութիւն չունի, որովհետեւ հեռացած է Աստուծոյ ներկայութենէն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Մենք մեր կեանքին մէջ գինի ունի՞նք, այլ խօսքով, ունի՞նք Աստուծոյ ներկայութիւնը, կ'ապրի՞նք Աստուծոյ ներկայութեան մէջ, եւ մանաւանդ, կ'ապրի՞նք Աստուծոյ ներկայութեան բերած ուրախութիւնն ու ցնծութիւնը: Եթէ ձեր սրտին մէջ գինի, այսինքն՝ ուրախութիւն չունիք, մօտեցէ՛ք Աստուծոյ եւ «առանց ստակի, ձրի գինի ու կաթ ծախու առէք» (Ես. 55.1):

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՂՕԹՔԻՂ ՊԱՏԱՍԽԱՆԵՆ ԿԸ ՓՆՏՈՒՄ ԱՍՏՈՒԾՄԷ, ԿԱՐԳՎ՝ ՍԱՂՄՈՍ 28

Տէ՛ր, օգնութիւն կ'ուզեմ քեզմէ: Դո՛ւն ես իմ ապաստանս, ականջներդ մի՛ փակեր. լուռ մնալդ պատճառ կ'ըլլայ, որ ես ողջ-ողջ գերեզման իջնեմ: Լսէ՛ խնդրանքս, երբ որ քեզմէ օգնութիւն կ'աղերսեմ, երբ ձեռքերս դէպի քու սուրբ տաճարդ կը բարձրացնեմ: Ձիս մի՛ դասեր հետը ամբարիշտներուն, հետը անոնց՝ որոնք չարիք կը հասցնեն ուրիշներուն, որոնք իրենց խօսքերուն մէջ սիրալիր են մարդոց հետ, մինչ իրենց սիրտերուն մէջ չարութիւն կայ: Պատուհասէ՛ զանոնք իրենց գործերուն համաձայն, տու՛ր արժանի պատիժը իրենց չարսիրտ վարմունքին: Իրենց ըրածին համեմատ վարուէ դուն ալ իրենց հետ, հատուցանելով իրենց այն ինչ բանի որ արժանի են: Քանի անոնք կ'արհամարհեն Տիրոջ գործը եւ ինչ, որ ան ստեղծեց, Տէրը զանոնք պիտի կործանէ այնպէս՝ որ ալ երբեք չկանգնին:

Օրհնեա՛լ է Տէրը, որ աղօթքիս պատասխանեց: Չօրութիւնս է ան եւ իմ պաշտպանս եւ ես իրեն կը վստահիմ: Իրմէ կու գայ օգնութիւնս, եւ իմ սիրտս կը ցնծայ: Հետեւաբար իմ երգովս անոր գոհութիւն պիտի յայտնեմ: Տէրը իր ժողովուրդին գորութիւնն է, ապաւէնը եւ փրկիչն է իր օժեպիւն:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԳԱՆՔ